Visa Student Քարտի տրամադրման և սպասարկման սակագները

Ծառայության տեսակ	Սակագին
1. Քարտային հաշվի սպասարկման միջնորդավճար	2,500 ՀՀ դրամ տարեկան
2. Հաշվի գերածախսի դիմաց գանձվող տարեկան տոկոսադրույք	21.5%
3. Վարկային գծի օգտագործման անտոկոս ժամանակահատված	-
4. Ամսական պարտադիր մարումներ	-
5. Լրացուցիչ քարտի սպասարկման միջնորդավճար (թողարկվում է հիմնական քարտի ժամկետով)	▪ American Express Cashback՝ անվճար ▪ Mastercard Standard՝ 2,000 ՀՀ դրամ միանվագ ▪ Mastercard UEFA Champions League՝ 2,000 ՀՀ դրամ միանվագ
6. Կից քարտի սպասարկման միջնորդավճար (թողարկվում է հիմնական քարտի ժամկետով)	անվճար
7. Քարտային հաշվի արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո
8. Քարտի գործողության ժամկետ	5 տարի
9. Կանխիկ դրամի տրամադրում բանկոմատներում և կանխիկի տրամադրման կետերում՝	
• *ԱԿԲԱ Բանկ*	▪ դրամային քարտերի համար՝ 0% ▪ արտարժութային քարտերի համար՝ 0.5%
• *Այլ բանկեր Հայաստանում*	1%
• *Այլ բանկեր արտերկրում*	1%, նվազագույնը 1,500 ՀՀ դրամ
10. Բանկի քարտային հաշիվներին կանխիկ դրամի մուտքագրում «Արմենիան Քարդ» համակարգի անդամ բանկերի բանկոմատների միջոցով	1%
11. Կանխիկի տրամադրման օրական հիմնական սահմանաչափ	▪ 1,000,000 ՀՀ դրամ ▪ 2,000 ԱՄՆ դոլար ▪ 2,000 եվրո
12. Կանխիկացման գործարքների օրական առավելագույն քանակ	10
13. Վճարային գործարքների օրական առավելագույն սահմանաչափ	▪ 1,000,000 ՀՀ դրամ ▪ 2,000 ԱՄՆ դոլար ▪ 2,000 եվրո
14. ՀՀ տարածքում քարտից քարտ փոխանցումներ առցանց հարթակների, «ACBA DIGITAL» ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով	0.5%
15. Բանկոմատների միջոցով քարտից քարտ փոխանցումներ[1]	0.2%
16. Քարտով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկացման ծառայություն SMS հաղորդագրության միջոցով	20 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ (գանձվում է յուրաքանչյուր հաղորդագրության դիմաց)
17. Քարտով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկացման ծառայություն acba digital ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով	անվճար
18. Քարտի Պին կոդի վերականգնում/ փոփոխություն	500 ՀՀ դրամ
19. Քարտի փոխարինում (Հայաստանում)	2,000 ՀՀ դրամ
20. USSD-տեղեկացում ծառայություն	10 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ (գանձվում է յուրաքանչյուր հաղորդագրության դիմաց)

Ծանուցումներ

Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց 365-օրյա ժամանակահատվածի ընթացքում տարեկան պարզ տոկոսադրույքի կիրառման և տոկոսների կապիտալացման ու վճարման հաճախականության հետևանքով տարեկան տոկոսային եկամտաբերությունը բոլոր քարտերի համար կազմում է 0%:

ԱԿԲԱ ԲԱՆԿՈՒՄ ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից» հատուցման ենթակա ավանդների չափերով, մասնավորապես՝

- ✓ միայն դրամային ավանդների դեպքում - 16 մլն ՀՀ դրամ,
- ✓ միայն արտարժութային ավանդի դեպքում -7 մլն ՀՀ դրամ,
- ✓ և՛ դրամային (7 միլիոնից ավել), և՛ արտարժութային ավանդների դեպքում – միայն դրամային ավանդը՝ մինչև 16 մլն ՀՀ դրամի չափով,
- ✓ և՛ դրամային (7 միլիոնից պակաս), և՛ արտարժութային ավանդների դեպքում - դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 7 մլն ՀՀ դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով:

Տոկոսագումարները հաշվարկվում են քարտային հաշվի մնացորդի նկատմամբ, օրական կտրվածքով, քարտի գործողության ողջ ժամկետի համար: Տոկոսագումարի հաշվարկը դադարեցվում է քարտի գործողության ժամկետի ավարտին հաջորդող ամսվա 14-ին կամ հաջորդ աշխատանքային օրը:

Հաշվարկված տոկոսագումարները վճարվում են քարտային հաշվին ամսական կտրվածքով՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը:

Սակագներում օգտագործված տերմինների մեկնաբանություն

- **Լրացուցիչ քարտ** - գործող քարտային հաշվին կցված այլ վճարային համակարգի քարտ: Լրացուցիչ քարտը հնարավորություն է տալիս Քարտապանին օգտագործել հիմնական քարտային հաշվին առկա միջոցները, եթե հիմնական քարտի հետ առաջացել են չնախատեսված խնդիրներ կամ այն չի սպասարկվում տվյալ առևտրի/սպասարկման կետի և/կամ բանկոմատի կողմից:
- **Կից քարտ** - գործող քարտային հաշվին կցված միևնույն վճարային համակարգի և տեսակի քարտ: Կից քարտը տրամադրվում է հիմնական քարտի քարտապանի կողմից նշված անձին և հնարավորություն է ընձեռում վերջինիս օգտագործել հիմնական քարտի հաշվին առկա միջոցները կից քարտի դիմումի մեջ նշված սահմանաչափերի շրջանակում: Տանկացած տեսակի քարտի համար տրամադրվում է առավելագույնը 2 կից քարտ, բացառությամբ American Express Gold (առավելագույնը 4 կից քարտ) և ArCa Business ու Visa Business (անսահմանափակ քանակությամբ կից քարտեր) քարտատեսակների: Կից քարտի միջնորդավճարը գանձվում է միանվագ քարտի գործողության ողջ ժամկետի համար:
- **Քարտով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկացման ծառայություն SMS հաղորդագրության միջոցով** - բանկում գրանցված հիմնական հեռախոսահամարին քարտապանի քարտային հաշվի շարժի վերաբերյալ sms-հաղորդագրության ստացում:

[1] Բացի նշված սակագնից Բանկի բանկոմատների միջոցով քարտից քարտ փոխանցումների դիմաց կիրառվում է նաև սպասարկող բանկի միջնորդավճար՝ 0.3‰: Ընդ որում, ՀՀ այլ բանկերի բանկոմատների միջոցով քարտից քարտ փոխանցումների դեպքում ևս կարող է կիրառվել սպասարկող բանկի միջնորդավճար, որի չափը սահմանվում է տվյալ բանկոմատը սպասարկող բանկի կողմից:

թարմացվել է առ՝ 24.10.2025թ.